



Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



ՀՈԳԵԳԱԼՈՒՄՏԷՆ ԵՏՔ ԵՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

21 ՅՈՒՆԻՍ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	Էջ 1
Հայերու Օրուան Արարողութիւն	Էջ 2
Ջոյգերու Մեմֆիս	Էջ 4
Ծովապահութեան Հարցը	Էջ 6
Իշխանաւորին Աղջիկը եւ...	Էջ 7
Ծանուցում	Էջ 8

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(1.2-15)

Լսէ՛, ո՛վ երկինք, ահա՛նջ դիր, ո՛վ երկիր, որովհետեւ Տէրը կը խօսի. «Զաւակներ ծնայ եւ մեծցուցի, բայց անոնք զիս ուրացան: Նոյնիսկ եզը զինք պահողը կը ճանչնայ, էշը գիտէ իր տիրոջ մտուրը, բայց Իսրայէլ իր Տէրը չի ճանչնար, իմ ժողովուրդս չի հասկնար զիս»:

Ո՛վ մեղաւոր ազգ, անօրէնութեամբ լի ժողովուրդ, չար սերունդ, դո՛ւք, անօրէն զաւակներ: Լքեցիք Տէրը, բարկացուցիք Իսրայէլի Սուրբը, օտարացաք եւ կռնակ դարձուցիք: Չի՞ բաւեր ձեր ստացած հարուածը, որ տակաւին կը շարունակէք ձեր մեղքերուն մէջ մնալ: Ահա հիւանդ էք գլխովին եւ տրտում էք սրտովին. վէրքով, ուռեցքով ու թարախալից պալարներով ծածկուած էք, որոնք կը մնան առանց սպեղանիի, ձէթի կամ վիրակապի:

Ձեր երկիրը աւերակ դարձած է, ձեր քաղաքները հրկիզուած, ձեր աչքին առջեւ օտար ազգեր կ'աւարեն, կ'աւերեն ու կը կործանեն ձեր աշխարհը: Սիոնի դուստրը՝ Երուսաղէմը միայն մնացեր է, այն ալ պաշարուած ու լքուած, նման՝ կոթիքէն վերջ այգիին մէջ լքուած պահապանի հիւղակին, կամ սեխաստանին մէջ թողուած մրգապահներու ծածկին: Եթէ Երկնային Զօրքերու Տէրը մեզմէ մնացորդներ պահած չըլլար՝ Սողոմի կամ Գոմորի նման կորսուած պիտի ըլլայինք: Լսեցէ՛ք Տիրոջ խօսքը, ո՛վ Սողոմի իշխաններ, Աստուծոյ օրէնքներուն ահանջ տուէք, ո՛վ Գոմորի ժողովուրդ. այսպէս կ'ըսէ Տէրը.

«Ի՞նչ կ'արժեն ինծի ձեր բազմաթիւ զոհերը. ա՛լ զգուցեայ ձեր խոյերու ողջակէզներէն եւ

պարարտ անասուններու ճարպէն: Ձեմ ուզեր գառնուկներու, ցուլերու եւ նոխազներու արիւնը: Ո՞վ պահանջեց ձեզմէ այս բաները, իմ ներկայութեանս գալու համար. ո՞վ ուզեց որ այդպէս ոտք կոխէք իմ գաւիթներէս ներս: Զուր տեղ նուէրներ մի՛ բերէք ինծի այլեւս. ձեր ծխած խուկը պիղծ է ինծի համար: Ձեմ կրնար տանիլ նորալուսնի նուիրած ձեր տօները, Շաբաթներն ու կրօնական հաւաքոյթները. ձեր տօնախմբութիւնն իսկ անօրէնութիւն է: Կ'ատեմ ձեր նորալուսնի եւ այլ տօները. զգուած եմ ձեզմէ, ա՛լ պիտի չներեմ ձեր մեղքերը: Երբ աղօթքի համար ձեր ձեռքերը բարձրացնէք՝ պիտի չնայիմ ձեզի. նոյնիսկ եթէ ձեր աղօթքները բազմացնէք՝ պիտի չլսեմ ձեզ, որովհետեւ ձեր ձեռքերը արիւնով ծածկուած են»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

(6.12-23)

Այսուհետեւ մեղքը թող չթագաւորէ ձեր մահականացու մարմիններուն մէջ, զանոնք իր ցանկութեանց հն ա զ ա ն դ ե ց ն ե լ ո վ : Մեղքին անձնատուր մի՛ ըլլաք, ձեր անդամները անիրաւութեան գործիք դարձնելով, այլ որպէս մահուընէ կեանքի եկած մարդիկ՝ դուք ձեզ Աստուծո՛յ յանձնեցէք եւ ձեր մարմինները Աստուծոյ ձեռքին մէջ արդարութեան գործիք դարձուցէք: Մեղքը ձեր վրայ պէտք չէ իշխէ, քանի դուք օրէնքին ենթակայ չէք, այլ շնորհքին:

ձեր
մարմինները
Աստուծոյ
ձեռքին մէջ
արդարութեան
գործիք
դարձուցէք:

Ուրեմն ի՞նչ. քանի շնորհքին ենթակայ ենք եւ ո՛չ օրէնքին, մե՞ղք գործենք: Բնա՛ւ երբեք: Լաւ գիտցէք, թէ որո՛ւ ծառայութեան որ նուիրուիք եւ հնազանդիք՝ անոր ծառան եղած կ'ըլլաք: Մեղքին ծառայելով՝ մահուան կ'ենթարկուիք, մինչ Աստուծոյ հնազանդելով՝ կ'արդարանաք: Գոհուի՛ր՛ն Աստուծոյ, որ

Թէպէտ ժամանակ մը մեղքին ծառայ դարձած էիք, բայց որովհետեւ սրտանց հնազանդեցաք ձեզի աւանդուած վարդապետութեան օրինակին, մեղքի տիրապետութենէն ազատեցաք եւ արդարութեան ծառայ դարձաք: Ծառայի օրինակով կը խօսիմ, որովհետեւ այդպէս աւելի հասկնալի է ձեզի: Ինչպէս որ ժամանակ մը ձեր մարմինները անօրէնութեան տուած՝ պղծութեան եւ անօրէնութեան կը ծառայէիք, այնպէս ալ հիմա սրբութեան տուէք ձեր մարմինները եւ արդարութեան ծառայեցէք: Երբ մեղքին ծառան էիք, հեռու էիք արդարութենէն: Ի՞նչ շահեցաք այն ժամանակուան ձեր գործերէն, որոնցմէ կ'ամչնաք հիմա. որովհետեւ անոնց հետեւանքը մահ է: Բայց հիմա մեղքին տիրապետութենէն ազատ էք եւ Աստուծոյ ծառաներն էք: Ձեր շահը սրբութեան նուիրուած կեանք մըն է, որուն արդիւնքը պիտի ըլլայ յաւիտենական կեանքը: Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է, մինչ Աստուած որպէս ձրի պարգեւ՝ յաւիտենական կեանք կու տայ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
(12.1-8)

Շաբաթ օր մը Յիսուս արտերուն մէջէն կ'անցնէր:

Աշակերտները անօթեցած ըլլալով սկսան հասկ փրցնել եւ ուտել: Երբ փարիսեցիները ասիկա տեսան, ըսին Յիսուսի. «Տե՛ս, աշակերտներդ ի՛նչ կ'ընեն. բան մը որ արգելուած է Շաբաթ օրով ընել»: Յիսուս պատասխանեց. «Չէ՞ք կարդացած թէ ի՛նչ ըրաւ Դաւիթ, երբ ինք եւ իր հետ եղողները անօթեցան:

Աստուծոյ տունը չմտա՞ւ եւ Առաջաւորութեան հացը չկերա՞ւ, որ օրէնքին համաձայն միայն քահանաներուն արտօնուած էր եւ ո՛չ թէ իրեն կամ իր հետ եղողներուն: Կամ չէ՞ք կարդացած Մովսէսի Օրէնքին մէջ, թէ Շաբաթ օրեր քահանաները տաճարին մէջ կը սրբապղծեն Շաբաթը սակայն ատիկա մեղք չի համարուիր իրենց: Ահա կ'ըսեմ ձեզի, որ տաճարէն աւելի մեծ մէկը կայ հոս: Եթէ իրապէս հասկնայիք թէ ի՛նչ կը նշանակէ մարգարէին խօսքը. “Ողորմութիւն կ'ընեմ եւ ոչ թէ զոհ”, այն ատեն չէիք դատապարտեր անմեղները, որովհետեւ մարդու Որդին Տէրն է Շաբաթին»:

Ողորմութիւն կ'ընեմ եւ ոչ թէ զոհ

ՀԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ

Այս արարողութիւնը պատրաստուեցաւ անցեալ տարի Բարեջան Առաջնորդ՝ Գրշ. Տ. Խաժակ Արք. Յակոբեանի հրամանով, Արժ. Տ. Գառնիկ Քեհեյ. Գոյունեանի կողմէ:

1

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

2

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Ընկա՛լ, կեցո՛՛ եւ ողորմեա՛:

3

Օրհնութիւն եւ փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

4

ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑ ՆԱԽԱՀԱՐՑ ԴԿ

Առ քեզ Աստուած Հարցըն մերոց խոնարհեալ անձամբք պաղատիմք. մի՛ անտես առներ, Տէր, որ փառաւորեալ ես յաւիտեան:

Յիշեա զուխտն Աբրահամու, ըզՍահակայ եւ զՅակոբայ. եւ զնեղելոց անձանց պաղատանս մի անտես առներ, Տէր, որ փառաւորեալ ես յաւիտեան:

Շնորհեա, Տէր, խնդրողացս ի քէն ըզթողութիւն մեղաց. խտաճարիքումսրբութեան. բարեխօսութեամբ սրբոց քոց. որ փառաւորեալ ես յաւիտեան:

5

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

Անապատին մէջ կանչողին ձայնը. «Տիրոջ ճամբան պատրաստեցէք ու ամայութեան մէջ մեր Աստուծոյն համար շաւիղ շտկեցէք:

Ամէն ձոր պիտի բարձրանայ, ամէն լեռ ու բլուր պիտի ցածնայ, ծուր պիտի շտկուի, խորտուբորտ տեղերը հաւասար պիտի ըլլան:

Տիրոջ փառքը պիտի յայտնուի եւ ամէն մարդ զայն նոյն ատեն պիտի տեսնէ. քանզի Տէրը խօսեցաւ»:

6

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՈՒՄԷԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ

...մարդ իր հաւատքով է, որ Աստուծոյ ծառանգորդ կը դառնայ, որպէսզի ատիկա շնորհքի արդիւնք ըլլայ եւ խոստումը ի զօրու ըլլայ Աբրահամի

ամբողջ սերունդին, այսինքն՝ ո՛չ միայն անոնց՝ որոնք Օրէնքին միջոցաւ եկած են Աստուծոյ, այլ նաեւ անոնց՝ որոնք հաւատքի ճամբով կու գան, Աբրահամի պէս՝ որ բոլորին հայրն է. ինչպէս գրուած ալ է. «Բազմաթիւ ազգերու հայր ըրի քեզ», քանի որ Աբրահամ հաւատաց Աստուծոյ՝ որ կը կենդանացնէ մեռեալները եւ գոյութիւն ունեցողի պէս կը կանչէ անոնք՝ որ տակաւին գոյութիւն չունին: Արդարեւ, հակառակ որեւէ յոյս չըլլալուն՝ Աբրահամ յուսաց եւ հաւատաց թէ «բազմաթիւ ազգերու հայր» պիտի ըլլայ, ինչպէս որ Աստուած իրեն ըսած էր. «Այսպէս պիտի բազմացնեմ քու սերունդդ»: Եւ Աբրահամ իր հաւատքին մէջ չտկարացաւ:

7
ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ

Եթէ ինծի միացած մնաք եւ խօսքերս ձեր մէջ մնան, խնդրեցէք Աստուծոյ ինչ որ ուզէք եւ պիտի տայ ձեզի: Իմ Հայրս կը փառաւորուի՝ երբ դուք առատ պտուղ տաք եւ այսպիսով իմ աշակերտներս ըլլաք:

Ինչպէս որ Հայրս զիս սիրեց, նոյն ձեւով ալ ես ձեզ սիրեցի: Մնացէ՛ք իմ սիրոյս մէջ: Եթէ գործադրէք իմ պատուիրաններս, իմ սիրոյս մէջ մնացած պիտի ըլլաք, ինչպէս որ ես Հօրս պատուիրանները գործադրելով անոր սիրոյն մէջ կը մնամ: Ասոնք ըսի ձեզի, որպէսզի իմ ուրախութիւնս ձեր մէջ ըլլայ եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ:

8
ՔԱՐՈՁ

Դարձեալ խաղաղութեան համար Երկնաւոր Հօր աղաչենք:

- Տէր, ողորմեա՛:

Հայրերուն համար՝ որոնք հոգեւոր յանձնառութիւն են ունեցած, եւ որոնք կ'ունենան ամէն օր, որպէսզի անոնց ճանապարհով կարենանք քալել:

- Տէր, ողորմեա՛:

Հայրերուն համար՝ որոնք մեզի կեանք են տուած եւ սէր, եւ որոնք կու տան ամէն օր, որպէսզի մենք ալ գանոնք յարգենք եւ սիրենք, աղաչենք Երկնաւոր Հօր:

- Տէր, ողորմեա՛:

Հայրերուն համար՝ որոնք ցաւ ունին եւ տագնապ ու տառապանք, որպէսզի կարենան յոյս, մխիթարութիւն եւ քաջութիւն գտնել, աղաչենք Երկնաւոր Հօր:

- Տէր, ողորմեա՛:

Հայրերուն համար՝ որոնք կը ննջեն, որպէսզի Աստուած գանոնք ընդունի իր անվախճան խաղաղութեան մէջ, աղաչենք Երկնաւոր Հօր:

- Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛. Տէր, ողորմեա՛:

Տէր Աստուած, արարիչ երկնքի եւ երկրի, թէ՛ հոգեղէն եւ թէ՛ երեւելի էակներուն, այլեւ՝ ամբողջ, ամբողջ գոյին:

Դուն, Տէր, հողէն կերպաւորելով մարդը, անոր ունեւորուն կենդանութեան շունչ տուիր եւ ան կենսաւոր հոգի եղաւ: Ըստ պատկերիդ նմանութեան զայն արու եւ էգ ստեղծեցիր՝ որպէսզի ան քեզի հաղորդակից ըլլայ, քեզ լսէ եւ հոգ տանի արարչութեանդ: Բայց ան իր ազատ կամքով հեռացաւ քեզմէ, սակայն Դուն, գթառատ Տէր, զայն խնամքէդ չզրկեցիր եւ արուին պարգեւեցիր հայրութեան շնորհքը, իսկ էգին՝ մայրութեան շնորհքը: Ադամ եղաւ նախահայրը երկրաւոր հայրերուն, ինչպէս Եւա եղաւ նախամայրը երկրաւոր մայրերուն: Այնքան պատուեցիր հայրութիւնն ու մայրութիւնը, որ քարէ սրբազան տախտակներուն վրայ արձանագրեցիր կեանք ունենալու ամենամեծ ճշմարտութիւններէն մէկը. «Պատուէ՛ հայրդ ու մայրդ»: Իսկ առականներուն մէջ ըսիր. «Որդեակ, լսէ հօրդ խրատը եւ մի՛ մերժեր մօրդ յորդորները, որպէսզի գլուխդ շնորհներու պսակով զարդարուի եւ վիզդ՝ ոսկի մանեակով»:

Ահա հաւաքուած ենք, Տէր, երկնատուր այս առիթով, գոհաբանութիւն վերառաքելու քեզի՛, որ մեզ արժանի դարձուցիր ոչ թէ միայն իբր արարածներ պարելու այս աշխարհի մէջ, այլ իբր որդիներ քալելու քու պատուիրաններուդ լոյս ճանապարհին մէջ: Դուն մեզի Հայր յայտնուեցար մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի շնորհիւ:

Մենք կը խոստովանինք եւ կը յայտարարենք քու մեծ սէրդ մեզի հանդէպ: Ինչպէս առաքեալը կ'ըսէ. «Աստուած իր միածին Որդին զրկեց աշխարհ, որպէսզի անով կեանք ունենանք: Այս է ահա ճշմարիտ սէրը. ո՛չ թէ մենք սիրեցինք զԱստուած, այլ Աստուած ինք սիրեց մեզ եւ իր Որդին զրկեց մեր մեղքերը քաւող իբրեւ Զոհ»: Փառք քեզի, Ո՛վ Հայրը հայրերուն:

Բարեբանեալ ես, Տէր, հոգեւոր հայրութեան պարգեւիդ համար. թող օրհնուին բոլոր հոգեւոր հայրերը, թէ՛ հիները եւ թէ՛ նորերը. առաքեալները, մարգարէները, նահատակները, մարտիրոսները, հայրապետները, եպիսկոպոսները, վարդապետները, երէցները, սարկաւագները, Աւետարանի շունչով բարեբարները, եկեղեցիչիտողները, դաստիարակներն ու ընկերային ծառայողները: Յիսուսի աշակերտելու անոնց օրինակը ի՜նչ սերտ հրապոյր է եւ ի՜նչ բուռն ուժ է:

Գովաբանեալ ես, Տէր, հոգեւոր հայրութեան դէմքերուն համար, որ ծնար Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ. Ս. Թադէոսի եւ Ս. Բարդողիմէոսի յաջորդ Ս. Զաքարիայէն Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Գրիգոր Լուսաւորիչէն Ս. Ներսէս Պարթեւ, Ս.

Ներսէս Պարթեւէն Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ, այլեւ Ս. Ղեւոնդ Երէջէն Յովհան Մանդակունի եւ Յովհան Օձնեցի, մինչեւ Ս. Գրիգոր Նարեկացին, Ս. Ներսէս Շնորհալին, Ս. Գրիգոր Տաթեւացին, եւ բոլոր անոնք՝ որ հաւատարմութեամբ աշակերտեցան ու կ'աշակերտին եկեղեցակերտ այն հայրերուն:

Ճշմարիտ, ճշմարիտ է, Տէր, որ երկրաւոր հայրութիւնը եւս քու պարգեւը է: Քանզի այդ շառաւիղով պիտի գար մեր Փրկիչը՝ Յիսուս. Ադամէն Ենովք, Ենովքէն Նոյ, Նոյէն Աբրահամ, Աբրահամէն Իսահակն ու Յակոբը, Յակոբէն Յուդա, Յուդայէն Դաւիթ, Դաւիթէն Զօրաբաբէլ, Զօրաբաբէլէն Յովսէփ: Իրաւ հայրութիւնը քու օրհնութիւնդ կը վախելէ բոլոր դարերուն մէջ, մինչեւ արքայութեանդ վախճանական հաստատումը Նոր Երկիրքին ներքեւ եւ Նոր Երկիրին վրայ:

Թող օրհնեալ ըլլայ յիշատակը բոլոր հայրերուն, որ ամբողջապէս ստանձնեցին իրենց կոչումը, պատասխանատուութեամբ խնամք տուին իրենց սերունդներուն, անոնց ուղղութիւն եղան եւ հաւատք, յոյս, սէր ներշնչեցին: Յիշէ՛ զանոնք, Տէր, եւ ողորմէ՛, լոյսերուդ մէջ բնակեցնելով անոնց հոգիները:

Թող օրհնեալ ըլլան իրենց կոչումը սրտանց ստանձնող բոլոր հայրերը. կեանքի դժուար պայքարին մէջ Ս. Հոգիէն քաջութիւն հագնին, անոնց միտքն ու հոգին, ծրագիրներն ու գործերը սրբէ՛, անոնք թող զերծ մնան չարին որոգայթներէն ու չսայթաքին երբեք: Աջիդ պահպանութիւնը միշտ անոնց վրայ ըլլայ եւ անոնց քայլերը Դուն առաջնորդէ:

Երկնաւոր Հայր, յատկապէս կ'աղաչենք քեզի բոլոր հայրերուն համար, որոնք ընկերային անարդարութեանց պատճառով կը տառապին, ընտանիքի քայքայման ընդհանրացող ախտին պատճառով հոգեկան տագնապներէ կ'անցնին եւ գործազրկութեան պատճառով՝ անձկութիւններու մէջ են, օգնէ՛ անոնց, որպէսզի յաւիտենական ներկայութեանդ նշանները ճառագայթելով լուսաւորեն հոգիներու մութը: Թող անոնք կարենան ապրիլ որպէս լոյսի ու ցերեկի, յոյսի եւ արդարութեան որդիներ: Եւ երկիւղածութեամբ վարելով իրենց կեանքերը մնան արթուն եւ իմաստութեան օրինակ ըլլան ի պատիւ եւ ի փառաբանութիւն սուրբ անուանդ, եւ Որդիիդ ու Ս. Հոգիիդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

10
Ս. Խաչիւս:

11
Պահպանիչ:

ԶՈՅԳԵՐՈՒ ՄԵՄԻՆԱՐ

ՄԱՍՆԱԿՅՈՂ ՄԸ

Մոնթրէալի Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Քրիստոնէական Դաստիարակութեան յանձնախումբը կ'ընդգրկէ աշխատանքային խմբակ մը՝ «Զոյգերու Ենթայանձնախումբ» անունով:

Հաւատարիմ իր ծրագրին եւ հետապնդած նպատակին՝ Զոյգերու Ենթայանձնախումբը Շաբաթ 13 Յունիս 2009-ին, 2-րդ տարին ըլլալով կազմակերպեց իր տիպին մէջ եգակի միօրեայ սեմինար մը. «Ընտանեկան Միաւորը Սուրբ է՝ Զոյգի Առաւել Մտերմութիւն»:

Հրաւերը բաց էր Մոնթրէալի հայ համայնքի պսակի պատրաստուող, նորապսակ եւ բազմամեայ պսակուած զոյգերուն:

Օրակարգի վրայ տեղ տրուած էր երկու գլխաւոր նիւթերու, որոնց արծարծման ընթացքին, ներկաները առնչուեցան բազմաթիւ՝ նոյնքան շահեկան յարակից նիւթերու հետ եւս:

Առաջին բաժինով դասախօսեց Մոնթրէալաբնակ հոգեբան Տիկ. Լիգա Լիպարեան «Ամուսնական Սահմանագիծերը» նիւթին շուրջ: Ինչպէ՞ս կարելի է ամուսնական ընտանութեամբ եւ զոյգի միաւորմամբ հանդերձ պահել իւրաքանչիւրին անհատականութիւնը ու յարգել անոնց անձնական սահմանագիծերը: Ինչպէ՞ս առողջ կերպով գործածել զոյգի մը ակնկալութիւնները իրարու հանդէպ: Ասոնք մի քանիսն են այն նիւթերէն, որոնք ներկայացուեցան:

Հայ Կեդրոնի հաշարահէն ներս հրամցուած կէտօրուայ նաշէն ետք, ջերմ եւ ընկերական առողջ մթնոլորտի մը մէջ, երկրորդ բաժնով դասախօսեց հոգեբու Տօֆ. Վահան Գուլումեան՝ յատկապէս հրաւիրուած Նիւ Եորքէն: Նիւթն էր ամուսնական անկողինը եւ սեռային մտերմութիւնը զոյգի մը առողջ փոխյարաբերութեան մէջ: Գիտական մօտեցման կողմին, Տօֆ. Գուլումեան շեշտը դրաւ հաւատքի նպաստին վրայ զոյգի մը մտերմութեան մէջ, ինչպէս նաեւ հոգեւոր կեանքի կարեւորութեան վրայ: Ան յիշեցուց թէ հայ զոյգերու ներկայութիւնը այսպիսի սեմինարի մը՝ նշանն է անոնց առողջ փոխյարաբերութեան: Տօֆօրը աւելցուց նաեւ



թէ արդար հարցադրումները ցոյց կու տան ընտանեկան կեանքի բարելաման ուղղութեամբ անոնց ունեցած առողջ հեռանկարը:

Ամուսնական եւ սեռային ճիւղերը ընկերային, հոգեբանական ու գիտական տեսանկիւններէ մանրամասնօրէն եւ յարատեւ վերլուծման ենթարկուող ճիւղեր են: Սակայն այս ձեռնարկը եզակի եւ յանդուգն կարելի է որակել, որովհետեւ ուղղուած է հայ գոյգերու, ներկայացուած հայ արհեստավարժ մասնագէտներու կողմէ, նախածեռութեամբ հայ եկեղեցիին: Այս իրողութիւնն է, որ առիթ ընծայեց հայ գոյգերուն համարձակ ներկայութեամբ եւ անկեղծ հետաքրքրութեամբ կարծիք փոխանակելու եւ հարցադրումներ կատարելու հայ գոյգին, հայ ընտանիքին, հայ անհատին եւ հայկական ընկերութեան յատուկ երեւոյթներու շուրջ՝ այսպիսով զանազանուելով ընդհանուր գիտական դիտանկիւնէն: Ճիշդ այս ճիւղի առնչութեամբ վեր առնուեցաւ խառն ամուսնութիւններու պարագան եւ օտար ամուսիններու (կին թէ այր) ներդրումը գոյգին մէջ որուն բաղադրիչ

անդամներէն միայն մէկը հայ է:

Ջոյգ դասախօսութիւնները ընթացան անկաշկանդ մթնոլորտի մէջ, որուն լաւագոյն արտայայտութիւնն էին յանախակի ծիծաղախառն պահերը:

Քննարկման եւ արժեւորման բաժնով ի յայտ եկաւ, որ միօրեայ այս սեմինարը բարձր գնահատութեան արժանի էր: Առաջարկուեցաւ հերթականութիւնը արագացնել, տեւողութիւնը երկարել եւ ամուսնական ճիւղերու կարգին խօսիլ ընտանեկան, ծնողական երեւոյթներու մասին եւս, ինչպէս առաջին գաւկի ծնունդը եւ աւելի ուշ զաւակ պսակելու հանգրուանը: Ցանկութիւն ի յայտ եկաւ, որ գոյգերու ենթայանձնախումբը մնայուն կերպով թիկունք կանգնի հայ երիտասարդ գոյգերուն՝ անոնց ամուսնական տարբեր հանգրուաններուն առնչուող դասընթացներ կազմակերպելով:

Միօրեայ այս սեմինարը կրկնելի օրինակ մըն էր եւ 35 անհատներու (տասնեակէ աւելի գոյգերը ներառեալ) աւելի քան գոհունակ մասնակցութիւնը անոր յաջողութեան լաւագոյն արտայայտութիւնն էր:

ՄԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՖԵՏԱՐԱՆԻՆ

Հեռուստա՝ ՋԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՖՈՐԵԱՆ
ԽԱՐԱԳԻՐ ԳԱՌԱԿ Ք. Գ.

Թ

ԾՈՒՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒ (14-17):

«Առիթով մը Յովհաննէսի աշակերտները մօտեցան Յիսուսի եւ ըսին.

- Ինչո՞ւ մենք եւ Փարիսեցիները յաճախ ծով կը պահենք, իսկ քու աշակերտներդ չեն պահեր:

Յիսուս անոնց պատասխանեց.

- Կարելի՞ է հարսանիքի հրաւիրեալներուն ըսել, որ սուգ պահեն, երբ տակաւին փեսան իրենց հետ է: Ժամանակ պիտի գայ, երբ փեսան պիտի վերցուի իրենցմէ, եւ այն ատեն իրենք ալ ծով պիտի պահեն:

Ոչ ոք չըուացուած նոր կտոր մը կը գործածէ հին հագուստի մը համար կարկանդակ ընելու: Որովհետեւ նոր կտորը փառելով՝ հագուստը կը պատուէ, եւ աւելի մեծ կ'ըլլայ պատուածքը: Նմանապէս, ոչ ոք նոր գինի չի տրուիր տխրու մէջ կը լեցնէ, այլ պալէ տխրու կը պայթին, գինին կը թափի, եւ տխրու կը փնանան: Ընդհակառակը, նոր գինին նոր տխրու մէջ կը դնեն եւ երկուքն ալ կը պահուին»:

«Ինչո՞ւ մենք եւ Փարիսեցիները յաճախ ծով կը պահենք, իսկ քու աշակերտներդ չեն պահեր»:

Հարցումը պահեցողներուն մասին չէ:

Հրեաները մեր ձեռով պահեցողներուն չունէին, այլ ծոմապահուածներուն ունէին: Ամբողջ օրը ծոմ կը պահէին, եւ օրը մէկ անգամ՝ երեկոյան կ'ուտէին: Այս սովորուածները Օրէնքէն չէր գար: Օրէնքը միայն մէկ անգամ եւ տարին մէկ օրուայ համար կ'ըսէ: Այս մասին նախապէս խօսած եմ: Սակայն ժամանակի ընթացքին, ռաբբիները՝ բարեխաղան գերութեանէն ետք՝ սկսած էին յաճախակիօրէն կիրարկելի ծոմապահութեան: Յիսուսի ժամանակ, ինչպէս Փարիսեցիի եւ մաքսաւորի առակէն գիտենք, շաբաթը երկու օրեր ծոմապահութիւն կը կատարուէր. այդ օրերն էին երկուշաբթին եւ հինգշաբթին:

Յովհաննէս Մկրտիչի աշակերտները նոյն սովորութիւնը կը պահէին: Եւ ահա անոնք կու գան կը մօտենան Յիսուսի եւ կ'ըսեն. «Ինչո՞ւ մենք եւ Փարիսեցիները յաճախ ծով կը պահենք, իսկ քու աշակերտներդ չեն պահեր»:

Ինչո՞ւ աշակերտներուն մասին կը հարցուի:

Որովհետեւ ռաբբիներու աշակերտները պէտք է որ առաւել նախանձախնդրութեամբ պահէին ռաբբիական ավանդութիւնները կամ սովորութիւնները: Յիսուս ինքն ալ ռաբբի մը կը համարուէր, ուստի կը խորհէին, թէ իր աշակերտներն ալ ծոմ պէտք է պահէին:

Յիսուսի պատասխանը կեանքէն իրական օրինակ մըն է: Ըսած է. «Կարելի՞ է հարսանիքի հրաւիրեալներուն ըսել, որ սուգ պահեն, երբ

տակաւին փեսան իրենց հետ է»:

Ըսել ուզած է, թէ իր աշակերտները հարսանեկան վիճակի մէջ են, եւ ոչ թէ սուգի:

Յիսուս ինչո՞ւ հարսանեկան պատկերով կը խօսի:

Հին Կտակարանին մէջ այդ պատկերը՝ իբր Աստուծոյ եւ իր ժողովուրդին փոխարարութեան օրինակ՝ ծանօթ էր, յատկապէս երգերու երգին էջերէն:

Նոր Կտակարանին մէջ ալ նոյն պատկերը գործածուած է, սակայն այս անգամ իբր պապայ կամ վախճանական իրականութեան նախապատկերացում:

Աստուծոյ եւ իր ժողովուրդին մօտիկութիւնը քայլ մը աւելի մերձեցում արձանագրեց Բանին Աստուծոյ մարդեղութեամբ, սակայն տակաւին անիկա իր կատարեալ վիճակին չէ հասած, այլ պիտի հասնի աշխարհի վախճանին, Քրիստոսի երկրորդ գալուստին: Այն ատեն է, որ Աստուծոյ եւ իր Որդիին հաւատարմները Նոր Երուսաղէմին մէջ պիտի վայելեն կատարեալ հարսանիքը, այսինքն՝ Աստուծոյ եւ անոր Գառնուկին հետ յաւիտենական միութիւնը պիտի ապրին:

Ներկայիս հարսանեկան ուրախութիւնը սկսած է, սակայն հարսին եւ փեսային «առագաստ» մուտքը կամ վախճանական միաւորումը չէ եղած տակաւին: Հարսանիքի հրաւիրուած ժողովուրդը ուրախութեան մէջ է դեռ: Մենք հարսանեկան ուրախութեան մէջ ենք, եւ անիկա պիտի շարունակուի մինչեւ որ միաւորման ժամանակը հասնի երկնային «առագաստ»ին մէջ, որ Նոր Երուսաղէմն է:

Յիսուս շարունակելով իր խօսքը, կ'ըսէ. «Ժամանակ պիտի գայ, երբ փեսան պիտի վերցուի իրենցմէ, եւ այն ատեն իրենք ալ ծով պիտի պահեն»:

Յիսուս ժամանակի մը մասին կը խօսի: Արդեօք ե՞րբ է այդ ժամանակը:

Այս առնչութեամբ բանալի մը ունինք, միակը՝ որ փեսային վերցուելու փոխարարութեամբ տրուած է: Փեսային վերցուելը կը նշանակէ Յիսուսի Ֆիլիքական ներկայութեան վերցուելը: Ասիկա չի նշանակեր, թէ Քրիստոս ներկայ չէ եկեղեցւոյ կեանքին մէջ: Եկեղեցին կը հաւատայ, որ Քրիստոս մնայուն կերպով ներկայ է: Եւ այդ մնայուն ներկայութիւնը հոգեւոր բնոյթ ունի: Հաւատացեալները անջատ չեն իրենց Տիրոջմէն, բայց նկատի ունենալով, որ մարմնաւոր բնութիւն ենք, ամբողջականօրէն չենք կրնար զգալ այդ ներկայութիւնը. անիկա կը խոստովանէ մեր Ֆիլիքական զգայարաններէն: Այդ պատճառով ալ անձկութեամբ կը սպասենք այն վայրկեանին, երբ վերստին իմաստուն կոյսերուն պէս պիտի կանգնինք հարսնարանի դրան առջեւ, որպէսզի բացուի անիկա եւ մենք կարենանք ներս մտնել: Որքան ատեն որ այդ վայրկեանին սպասման մէջ ենք, այնքան ատեն զրկուածութիւն մը կ'ապրինք: Ուստի, ծոմ կը պահենք, որպէսզի հոգեւոր պատրաստ ըլլանք Տիրոջ հետ վախճանական միացման:

Իսկ ի՞նչ կը հասկնայ Յիսուս «նոր գինի» պատկերով:

Իր բերած նոր վարդապետութիւնն է անիկա:

Հին տիկը ի՞նչ է:

Հին տիկն ալ այն մարդիկն են, որոնք հին վարդապետութեամբ դաստիարակուած են եւ ի վիճակի չեն նորոգուելու:

Կը նորոգուի կամ կրնայ նոր գիտիւն ընդունել ան՝ որ Երկինքի արքայութեան կ'աշակերտի:

ԻՅՈՒՆԱՄՈՐԻՆ ԱՊՓԿԸ ԵՒ ՀԻՒՆՊ ԿԻՆՈ (18-26):

«Մինչ Յիսուս անոնց այս ուսուցումները կ'ընէր, երեսնա իշխանաւոր մը մօտեցաւ եւ ծուկնի գալով, ըսաւ անոր.

- Աղջիկս նոր մեռաւ, բայց եկուր եւ ձեռքդ անոր վրայ դիր ու անիկա պիտի ողջնայ:

Յիսուս ելաւ եւ իր աշակերտներուն հետ գնաց անոր ետեւէն:

Եւ ահա կի՛ն մը, որ տասներկու տարիէ ի վեր արիւնհոսութեան կը տառապէր, Յիսուսի ետեւէն մօտեցաւ եւ դպաւ անոր հագուստի բոկակներէն: Ան ինքնիքն կը խորհէր ու կ'ըսէր. Միայն դպնամ անոր հագուստին եւ պիտի բժշկուիմ:

Յիսուս ետեւ դարձաւ եւ կի՛նը տեսնելով, ըսաւ.

- Աղջիկս, քաջալերուէ՛, հաւատքդ քեզ բժշկեց:

Նոյն վայրկեանին կի՛նը բժշկուեցաւ:

Երբ Յիսուս իշխանաւորին տունը եկաւ եւ տեսաւ փողահարները եւ խոստովանուողները, ըսաւ անոնց.

- Մէկդի՛ կեցե՛ք, որովհետեւ աղջիկը մեռած չէ, այլ կը բնակայ:

Բոլորն ալ սկսան ծաղրել զինք: Երբ բազմութիւնը դուրս ելաւ, Յիսուս մտաւ աղջկան սենեակը, բռնեց անոր ձեռքէն, եւ աղջիկը ոտի ելաւ: Այս լուրը ամբողջ շրջանին մէջ տարածուեցաւ:»

Հրեայ իշխանաւորը, որուն մասին կ'ախարհակուի, Մարկոսի եւ Ղուկասի աւետարաններուն մէջ անունով կը յիշուի՝ իբր Յայրոս: Նաեւ կը յիշուի անոր պաշտօնը՝ թէ ժողովրդապետ մըն էր: Ժողովրդապետ կը կոչէին ան՝ որ սինակոկի պատասխանատու էր: Այս իշխանաւորը, ուրեմն, Հին Կտակարանի ներկայացուցիչներէն մէկն էր:

Ան ջերմեռանդութեամբ ծունկի կու գայ Յիսուսի առջեւ եւ կ'ըսէ. «Աղջիկս նոր մեռաւ, բայց եկուր եւ ձեռքդ անոր վրայ դիր ու անիկա պիտի ողջնայ»: Ասիկա ցոյց կու տայ Յայրոսի զօրաւոր հաւատքը Յիսուսի անձին հանդէպ:

Յիսուս անմիջապէս ժողովրդապետին կը հետեւի՝ երթալու անոր տունը եւ յարուցանելու համար աղջիկը:

Յանկարծ միջանկեալ ուրիշ դրուագ մը կու գայ, որ կը պատմէ բժշկութիւնը տասներկու տարիներէ ի վեր արիւնհոսութենէ տառապող կնոջ մը:

Այս բժշկութեան կարեւորագոյն կէտն է Յիսուսի խօսքը, որ կը յայտնէ, թէ կնոջ բժշկութեան պատճառը անոր հաւատքն է:

Յայրոսի ինքնութիւնը ճշգրեցինք: Իսկ ո՞վ է այս կինը:

Աւետարանները որեւէ բացատրութիւն չունին: Աւանդութիւնը սակայն հետաքրքրական տեղեկութիւն մը պահած է: Եւսեբիոս Կեսարացի իր Եկեղեցական Պատմութիւն գործին մէջ կ'ըսէ, թէ մինչեւ իր ժամանակ՝ Փիլիպպեան Կեսարիա քաղաքին մէջ, որ ներկայիս կը կոչուի Պանիաս, հրապարակին վրայ երկու արձաններ կային: Մէկը

ծունկի եկած կին մը կը ներկայացնէր, միւսը՝ իշխանութիւն ունեցող մը, որ իր ձեռքը երկարած էր անոր վրայ: Ըստ քաղաքին բնակիչներուն, այս արձանները տեւատես կնոջ բժշկութիւնը կը ներկայացնէին: Նոյն քաղաքացիներուն համաձայն, արձանները շինուած էին այն կնոջ կողմէ, որ բժշկութեան արժանացած էր: Սա կը նշանակէ, որ բժշկուած կինը ունեւոր էր:

Այլ աւանդութիւն մը՝ յաւելեալ տեղեկութիւն կու տայ մեզի: Ըստ որուն, երբ մեր Տէրը խաչելու կը տանէին, տեղ մը կանգ առին եւ Յիսուս իր խօսքը ուղղեց կիներուն, ըսելով. «Երուսաղէմի՛ աղջիկներ, մի՛ լաք իմ վրաս, այլ լացէք դուք ձեր եւ ձեր զաւակներուն վրայ եւսայն» (Ղկ 23.28): Այդ պահուն կին մը մօտեցաւ Յիսուսի եւ իր գլխանոցով անոր քրթնաթոր եւ արիւնաշաղախ երեսը սրբեց, եւ ահա Յիսուսի դէմքը այդ գլխանոցին վրայ ելաւ: Ետքը գլխանոցը պահուեցաւ, եւ ապա Հոռոմ տարուեցաւ: Նոյն աւանդութիւնը կը տեղեկացնէ, թէ կնոջ անունը Վերոնիքա էր:

Ճանապարհին վրայ այս բժշկութենէն յետոյ, Յիսուս կը շարունակէ իր ճամբան եւ կը հասնի Յայրոսի տունը: Այնտեղ փողահարներ կը տեսնէ: Ծանօթ է, որ արեւելքի մէջ ունեւորները թէ՛ իրենց ուրախութեան եւ թէ՛ իրենց սուգի պահերուն երաժիշտներ կը հրաւիրէին, որպէսզի անոնք տխուր եղանակներ կատարեն կամ տխուր երգեր երգեն եւ յուզիչ մթնոլորտ ստեղծեն:

Իսկ «խոսոված ամբօխ» ակնարկութիւնը կրնայ վերաբերիլ վարձկան լացող, ճչացող, պոռպուացող, երգող բազմութեան մը: Այդ պատճառով թերեւս Յիսուս կ'ըսէ. «Մէկդի՛ կեցէք»:

Յիսուս ներս մտնելով կը բժշկէ աղջնակը, զայն ոտքի կը հանէ՝ ձեռքէն բռնելով: Եւ այս լուրը ամբողջ շրջանին մէջ կը տարածուի:

Ինչպէ՞ս հասկնալ «աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ» խօսքը: Ղազարոսի պատմութեան մէջ կը տեսնենք, որ Յիսուս իր աշակերտներուն դառնալով կ'ըսէ. «Մեր բարեկամը՝ Ղազարոս քնացած է» (ՅՆ 11.11): Աշակերտները սխալ հասկեցան կամ չհասկեցան Յիսուսի ըսածը: Ուստի պատասխանեցին. «Տէ՛ր, եթէ քնացած է՝ ուրեմն կ'առողջանայ»: Եւ Յիսուս անմիջապէս ճշգրեց. «Ղազարոս մեռաւ. բայց ես հոն չըլլալուս՝ ձեզի համար ուրախ եմ, որովհետեւ դուք ինձի պիտի հաւատաք» (ՅՆ 11.14-15):

Յիսուս «մեռնիլ» եւ «քնանալ» բայերը իրարու տեղ կը գործածէ:

Արդ, երբ Յիսուս կ'ըսէ, թէ աղջիկը կը քնանայ, ըսել չ'ուզեր, թէ ան մեռած չէ: Անկասկած աղջիկը մեռած էր: Բայց Յիսուս մեռնիլը «քնանալ» կը կոչէ: Ինչո՞ւ համար արդեօք:

Երբայական կրօնական հասկացողութեան մէջ, մարմնաւոր մահը «քնանալ» կը կոչուէր: Եւ Յիսուս երբ «քնանալ» բայը կը գործածէր՝ նոյն բանն է, որ կ'ըսէր:

(Շարունակելի 38)

ԵՐԵՍՆՕՐԵԱԿ

Երեքշաբթի, 23 Յուլիս 2009
19.00 Ֆիլմի ցուցադրութիւն
"The Sea Inside"

Հինգշաբթի, 25 Յուլիս 2009
11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Հաքաթ, 27 Յուլիս 2009
ԳԻՏ ՆՇԱՐԱՅ

Կրոնար, 28 Յուլիս 2009
09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Հինգշաբթի, 02 Յուլիս 2009
Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵԱՐՈՊ
11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրոնար, 05 Յուլիս 2009
09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Հինգշաբթի, 09 Յուլիս 2009
11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրոնար, 12 Յուլիս 2009
09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Հինգշաբթի, 16 Յուլիս 2009
11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրոնար, 19 Յուլիս 2009
ՎԱՐՊԱՎԱՆ
09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

Հինգշաբթի, 23 Յուլիս 2009
11.00 Աղօթածողով՝
Քոյրերու ժողով

Կրոնար, 26 Յուլիս 2009
09.30 Ժամերգութիւն
11.00 Ս. Պատարագ

ՀՐԱՔԷՐ ԲՈԼՈՐԻՆ

**"ՆԵՐՔԻՆ ԾՈՎՈՒ"
"The Sea Inside"**

Ֆիլմի ՅՈՒՅԱԿՐՈՒԹԻՒՆ
ԵՒ ՁՐՈՅ

ՏԵՌԻ Կ՛ՈՒԵՆԱՅ
ԵՐԵՔԱՔԹԻ 23 ՅՈՒԼԻՍ 2009-Ի
ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՄԸ 7.00-ԻՆ,
ԹԻՒ 3 ԱԵՆԵԱԿ



**ՀՈՎԻԲԸ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄՆ ՄԷՋ**

Անոնք որ կը փափաքին
հովիւին այցելութիւնը ունենալ
իրենց տունէն ներս,
թող բարեհաճին դիմել
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,
հեռաձայնելով 514 331 5445 x203
կամ՝ 514 909 5203 քիւերէն մէկուն:

ՆԱԽՈՐԴ ԹԻԲԵՐՈՒ ԿՐԱՔ ԳՏԱԵԼ
www.sourphagop.org/lradou
ԿԱՅԲԷՉԻՆ ՎՐԱՅ